

Գ Ր Ա Կ Ա Ն

ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ*)

Գ.

Ա-ի տաղանդը պատմութեան մէջ. Ա-ի դիտելու, վերաբերելու շնորհքն ու ձեռքը և նրանց գեղարուեստական արժէքը. Մօպսանի և Զեխովի պատմութեան մասին առանձնաշատուկ կողմը. Ընթերցողին լարելու ջանքեր. Զափի և ներդաշնակութեան բացակայութիւնը. Պատմութեան նմանութիւնները. Սևօրերի վերլուծութիւնը.

Մինչև այստեղ մենք գրադուեցինք այն խնդիրներով, որոնք վերաբերում էին Ահարոնեանի երկերին ընդհանրապէս, այժմ անցնենք նրա ստեղծագործութիւնների տեսակներին՝ պատմութեան, վէպ և դրամայի ու պարզեմք նրանցից ամեն մէկի արժէքաւոր և անարժէք կողմերը:

Տեսանք, որ Ահարոնեանը իր գրական գործունէութիւնը սկսեց պատմութեանով. այս շրջանը աւելի էր համապատասխանում նրա տաղանդին քան մեծ երկերի ստեղծագործութիւնը, որովհետև նրա դիտելու, վերաբերելու շնորհքը ընդգրկել է կարողանում կեանքի այս ու այն եղանակի կողմը, ընդհանրացումներ, կապակցութիւններ, նոր հանգոյցներ առաջ բերել կեանքի զատ զատ դիտած գծերի մէջ կապ հաստատել անկարող է ու թոյլ նրա տաղանդը, երբ կարգում ենք Զեխովի կամ Մօպսանի պատմութեանը մեր առաջ որոշ, պարզ ու պայծառ գոյներով պատկերանում են հեղինակների դիտած կեանքի

*) Տես «Արարատ» 1916 թ. Յուլիս—Նոյեմբեր համարները:

այս ու այն անկիւնը, մարդկանց յեղյեղուկ հոգեբանութեան ծաղիքներն ու նրանց գրեւորած գործը և այս բոլորը 10—15 երեսում կարճ ու կտրուկ: Մի երկու խօսք և պարզւում է պատմութեան հանգույցը, դրութիւնը և առանց աւելորդ արանութեան ու ձգձգելու ընթանում դէպի իւր անհրաժեշտ լուծումը:

Ահարոնեանի բազմաթիւ պատմութեան մէջ ցուցադրուած անձնաւորութիւնները, խնդիրները և կեանքը գեղարուեստական ճշմարտութեամբ շնչուած մարտնչութեամբ ուստի և մեծ արժէք չունին: Պատմութեան հաստատար ժողովածուների մէջ չկայ դրութիւն, հանգույց, լուծում և իդէա: Օրոնք յաջորդեն միմեանց գործող անձանց արարքների հոգեկան անհրաժեշտ պատճառակցութեամբ, այդ բոլորին փոխարինում են հէքիաթային շինծու թռիչքները: Պատմութեան մէջ շօշափած խնդիրների կարեւորն ու անկարեւորը չի կարողանում զատել, ամենուրէք լարել է ջանում նրա ծայրայեղ զգայականութեան հասած հոգին ընթերցողի միտքը, ստիպում է, որ վերջինս ոգրայ, լաց լինի այնտեղ, ուր գուցէ թեթեւ կսկիծը մի լուռ ներքին հառաչն էլ շատ շատ է: Նրա բոլոր պատմութեանը սկսւում են վերամբարձ, խորհրդաւոր, շափաղանց լարուած տոնով և այդ կերպ էլ վերջանում: Բացականչութեանց, շահերանների, բազմակետների, մասամբ նաեւ իր բովանդակ հոգու անորոշ, թախծոտ շեշտերով է, որ Ահարոնեանը գունաւորում, հետաքրքիր է դարձնում իր պատմութեանը, նրանց մէջ պակասում են գեղարուեստական ստեղծագործութեան շափի ու ներդաշնակութեան պահանջը, ընթերցողը կարդալու առաջին բաղէից արդէն գիտէ, թէ պատմութեան իրեն ռար է սանում: Հայեացքն ուղղած դէպի իր յառաջադրեալ նպատակը հեղինակը ուշադրութիւն չի դարձնում պատմութեան ընթացքի ու նրա մէջ ցուցադրած խնդիրների ներքին կապակցման վրայ, այլ այդ տարածութիւնը լցնում է երեւակայական ու դիպուածային իրողութիւններով: Եթէ կայ մի արժէքաւոր բան այս մաս ստեղծագործութիւնների մէջ, այդ մի քանի յաջող պատ-

մուսաւորներն են և բնութեան անձնաւորեալ նկարագրութիւնները: որոնք իրենց վրայ են կրում Ահարոնեանի հուրհրատող տաղանդի ցոյքերը:

Ահարոնեանի պատմութեանը եթէ բովանդակութեան տեսակէտից համեմատելու լինենք միմիանց հետ՝ չափազանց շատ նմանութեան ու շփման կէտեր կգտնենք: Նրանք նորութիւն չեն բերում: շարունակ միաձեռքի գծերով համակուած: շարունակ հնի կրկնութիւն: նման են «Մաշիկ»-ն ու «Սե օրերը» (վեպերի կործանման նկարագիրը): «Մայրերը»: ու «Մայրը»: «Մասիան» ու «Բախտի խաղերը»: «Ազատութեան սղին» ու «Արցունքի հովիտը»: Որպէսզի պատմութեանը մասին մեր ունեցած հասկացողութիւնը լրիւ լինի՝ փորձենք վեր լուծել Ահարոնեանի մի երկու յաջող և անյաջող պատմութեանը: Արժեքաւոր պատմութեանը են՝ «Մայրերը»: «Անդունդը»: «Մոխիրների տակից»: «Մեծ հանապարհին»: «Բաշտն»: «Կեանքի վեպը»: «Ժողովածուն»: և «Սհանի վիշտը»: Իսկ անյաջողները շատ են ու առանձին անհրաժեշտութիւն չկայ թուելու:

Վերցնենք անյաջող պատմութեանը «Սե օրերը»: Իսկ յաջողներից՝ հեղինակի զուլի գործոցը՝ «Անդունդը»: «Սե օրերը»: Ահարոնեանի մեծ պատմութեանը են: նրա մէջ շոշափած խնդիրները բաւական բազմազան են համեմատած միւս պատմութեանի հետ: Նիւթը վերցրած է տաճկահայ ժողովրդի կեանքից: Դրութիւնը: որի զարգացման շուրջը պիտի պտտի ամբողջ պատմութեանը սկզբից պարզ դրուած է:—Սիրող հօր՝ Սհոի ներքին աշխարհի փոթորիկն է: այն ահռելի կասկածից յառաջացած: Թէ իր աղջիկ Մարօ-ի գեղեցկութիւնը դժբախտութեան պատճառ պիտի դառնայ... Չէ՞ որ գեղեցիկ կին ու աղջիկ ունենալը նրանց աշխարհում շարիք է: Սհոի կասկածը աւելի իրական փառտի ոյժ է ստանում: այն սովորական դարձած վարմունքի շնորհիւ: որով վաւաշոտ բեղերը յագուրդ էին տալիս իրենց ստոր կրքերին: Գեղեցիկ հայ կինն ու աղջիկն էր նրանց երազների ու մտածողութեան առարկան:

Հեղինակը Սոսի կապածները միայն ծնողներին յա-
տու փրկով ու հոգատարութեամբ չի բացատրել, այլ այն
առանձնայատուկ պայմանների մէջ է գրել, ուժեղացրել,
հետաքրքիր դարձրել: Սոսն իր Մարօ-ի մէջ մարմնացրել է
մեռած կնոջ և որդու սէրը, նրան ինքն է պահել ու մե-
ծացրել: Նա մտածել անգամ չի ուզում, որ Մարօն մի
օր պիտի ամուսնանայ ու նրան թողնի մենակ լինչպէս
թաշուել առանց ձագերի:

Այս հարուստ, բովանդակալից հոգերանական խնդիրը
պատմուածքի սկզբում որպէս դրութիւն դնելով հեղի-
նակը դժբախտարար հարկաւոր ուժեղութեամբ չի զար-
գացնում, աւաջ տանում: Աչքաթող անելով այս, նա մի-
ջանկեալ պատմում է Մարօի ու Մուսօի սէրը, Քաշալ
Սրբէի արկածալից կեանքը, Յակոբի ու Զորանենց ընտա-
նիկների դժբախտութիւնները, որոնք ոչ դրութեան հետ
կապ ունեն և ոչ էլ որ և է կերպ զարգացնում են նրա
ընթացքը: Այս բոլորի մէջ կարեորէ Մօսու և Քաշալ
Սրբէի ընդհարումը Մարօի պատճառով, որից յետոյ
Քաշալ Սրբէն յղանում է Մարօին փախցնելու ծրագիրը
և իր քիւրդ փեսայ Ռզգոյի հետ ի կատար ածում: Իս-
կապէս Մարօի փախցնելով էլ վերջանում, լուծւում է
սկզբում դրուած դրութիւնը, սակայն հեղինակը պատ-
մուածքը վերջացած չի համարում: Մարօին փախցնելուց
յետոյ գիւղացիներին անյայտ պատճառով անհետանում է
Մօսին, պատմուածքը յառաջ է բերում նոր հանգոյց—
արդեօք ո՛ւր է Մօսին, գտնելու է Մարօին, թէ՛ ոչ: Այս
դրութիւնն էլ հակառակ հեղինակի թափած ջանքերի
հում է մի քաբացած մեծութիւն:

Մօսին, որպէս քիւրդ երգիչ շրջում է Սիփանայ սա-
բերում, գտնում այն վրանը, որտեղ փակուած էր Մարօն,
գտնում է այդ վրանի պահապան, սպանում վրանատէր
բէգին և ազատում Մարօին: Այստեղ էլ վերջանում է
երկրորդ դրութիւնը: Հեղինակը այնուհետեւ մանրամաս-
նօրէն նկարագրում է Սոսի կենաց վերջին վայրկեանները,
Մօսու և Մարօի վերադարձը: Այս բոլորից յետոյ պատ-

մուածքը ցուրահանում է մի երրորդ դրութիւն՝ սպանուած
բէզի եղբօր զայրոյթը. որի հետեանքն է լինում Գ...
գիւղի կործանումը. Մարօի ու Մօսու փախուստը և հե-
րօսական մահը:

Վերայիշեալ երեք դրութիւնները ըստ էութեան մի-
միանցից են բղխում ու սերտ առնչութիւն ունեն իրար
հետ. սակայն այդ առնչութիւնը փաստական է և չէ զե-
ղարուեստական: Հեղինակը ամեն մի դրութիւն աւանդին
չի զարգացրել, մէկը միւսին չի հանգուցել, մէկ միւսից
չի եզրակացրել: Գեղարուեստական տեսակէտից ինք հան-
գոյցները պատմուածքի մէջ մնում են ջոկ, ջոկ՝ իրարից
զատուած միութիւններ: Որոնց մէջ խնդուելին կողմնա-
կի, նիւթին չվերաբերող բամազթիւ խնդիրներ:

Երբ Մարօին փախցնում են՝ Ահարոնեանը հօր դիւ-
թիւնը նկարագրում է ուշաթափութեամբ, մեզ անյայտ
է մնում դժբախտութեան պատճառով հօր հոգու զաւար-
ւող ապրումները. այն հօր, որ իր դոյութեան նպատակը
Մարօի մէջ էր տեսնում: Անյայտանում է Մօսին, գիտենք,
որ Մարօին որոնելու է զնացել, բայց ինչ վճիռների, ներ-
քին համայնողական ինչ խիժաններով է յառաջընթանում՝
չգիտենք: Արդեօք սէրն է նրան գործի մղողը, վրէժխն-
դութիւնը, թէ՛ պատիւը, կամ զուցէ այս երեքը միասին:
Այս դրութեանց հոգեբանական բացատրութիւնը մի մեծ
օգակ էր առաջին ու երկրորդ դրութիւնները կապակցելու,
որովհետեւ Մարօին փախցնելը Մօսու մէջ պիտի ծնէր, որ
և է կերպ նշանածին գտնելու, ազատելու կամ կատա-
րուած իրողութեան հետ հաշտուելու միտքը: Առաջին
դէպքում պատմուածքի երկրորդ դրութիւնը բնականօրէն
կզարգանար, իսկ երկրորդ դէպքում պատմուածքը կվեր-
ջանար առաջին դրութեան լուծմամբ:

Երրորդ դրութիւնը նոյնպէս կապուած չէ երկրորդ
դրութեան հետ: Գիտենք, որ սպանուած բէզի եղբայրը
կատաղել է, նրա մէջ զանթնել է վրիժառութեան ողին և
այդ զգացման բաւարարութիւն տալու համար զալիս է
Գ..... գիւղը կործանելու: Բայց այդ լինում է անմիջա-

պէս: բէգի զայրոյթն ենք տեսնում միայն և դրան հետեւում է զիւղի կոտորածը: այն էլ միայն Մօսու պատճառով:

Հեղինակը երբ որ և է դրութեան կամ գործող անձի հոգու տրամադրութիւն է յառաջ բերում: աստիճանաբար նրա զարգացման ընթացքը չի ընդգծում: Ընթերցողին մօտեցնում է հոգիների եղբրքին: դնում նրանց առաջ ծանր խնդիրներ: բացում կամացուկ հոգու դռները և մի ոտախենով անցնում միւս ափը: նկարագրում հոգեկան դրութեան վախճանը: Եւ այս ոչ միայն բնորոշ պակասութիւնն է Վե օրերի-ի: այլ և ուրիշ բազմաթիւ պատմութեան ճշմարտութիւններ:

Վերեւ ասածներից պարզ երևում է այն, որ Վե օրերի: պատմութեան ճշմարտութիւնն ենք ներկայացնում մի ամբողջութիւն: նրա տարրեր դրութիւնները: ինչ ձևով հանդէս են գալիս պատմութեան մէջ: զատ: զատ մասեր են և մէկի չբացումով չի փաստել: միւսների գեղարուեստական կառուցումները: Հեշտութեամբ կարելի է դուրս ձգել Զորանենց տան: Սհօի մահուան: Յակորի տան նկարագրութիւնները: Երբ հարց ենք տալիս: թէ հեղինակը ինչպէս է բերել: ի մի հաւաքել գեղարուեստորէն առնչութիւն շունեցող այդ տարրեր մասերը՝ պատասխանը պարզում է վերջում.— իր հերոսների (Մօսի: Մարօ) բարոյական յաղթանակը հիմնադրելու: պարզ կացուցանելու: Ահա այդ ցաք ու ցրիւ դրութիւնները մազային թելով օղակող իդէան: եթէ կարելի է այդ իդէայ անուանել: որ այսպէս թէ այնպէս անհրաժեշտ է դարձնում ձգձգում պատմութեան հատուածները: Այսքանը բաւ համարելով Վե օրերը: պատմութեան մասին: անցնենք Վնդունդի-ի վերլուծութեան:

Ե. Հայրապետեան

(Նարունակելի)

